ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.07.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/167

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.07.2020թ. թիվ 26/26-1/11039-2020 գրությամբ «Վանդաժի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 20.07.2020թ. թիվ 1.4/5048-2020 գրության հիման վրա, 23.07.2020թ. թիվ 26/26-1/11039-2020 գրությամբ նախաձեռնել է «Վանդաժի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Վանդաժի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/167 ընթացակարգի շրջանակներում 31.07.2020թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.07.2020թ. թիվ 1.4/5048-2020 գրությամբ հայտնել է, որ տրամադրում է «ՀՀ ԱԺ ԲՄԱՇՁԲ-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում կնքված պայմանագիրը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը և ծանուցումը տեղեկագրում հրապարակելու վերաբերյալ ապացույցը, ինչպես նաև «Վանդաժի» ՍՊԸ-ին ծանուցված համաձայնագիրը և համաձայնագիրը ուղարկված լինելու փաստը հավաստող ապացույցը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/167 ընթացակարգի քննության շրջանակներում 31.07.2020թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/167 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/167 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար ՀՀ ԱԺ վարչական մ/շ, տնտեսական մ/շ և ավտոտնտեսության ջեռուցման ցանցերի, ջեռուցման արտաքին ցանցի և ջերմային կամերայի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԲՄԱՇՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի արդյունքում 27.02.2020թ. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և «Վանդաժի» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ՀՀ ԱԺ ԲՄԱՇՁԲ-20/1» կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր):

2. Պատվիրատուի կողմից 22.06.2020թ. «Վանդաժի» ՍՊԸ-ին ուղարկվել է համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը՝ խնդրելով

ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ընկերության կողմից հաստատված գրությունը և կնքված համաձայնագիրը:

3. Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 17.07.2020թ. հայտնել է «ՀՀ ԱԺ ԲՄԱՇՁԲ-20/1» գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 17.07.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.07.2020թ. թիվ 26/26-1/11039-2020 գրությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 20.07.2020թ. թիվ 1.4/5048-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. ***որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,***

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ***մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:*** Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 18-րդ կետի համաձայն՝ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով***: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:***

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանվում է, որ ***եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների***

մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: ***Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

Այսպես, ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար ՀՀ ԱԺ վարչական մ/շ, տնտեսական մ/շ և ավտոտնտեսության ջեռուցման ցանցերի, ջեռուցման արտաքին ցանցի և ջերմային կամերայի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԲՄԱՇՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթ, որի արդյունքում 27.02.2020թ. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և «Վանդաժի» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ՀՀ ԱԺ ԲՄԱՇՁԲ-20/1» պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 22.06.2020թ. «Վանդաժի» ՍՊԸ-ին ուղարկվել է համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը՝ խնդրելով ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ընկերության կողմից հաստատված գրությունը և կնքված համաձայնագիրը:

Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 17.07.2020թ. հայտնել է «ՀՀ ԱԺ ԲՄԱՇՁԲ-20/1» գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 17.07.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզել է հետևյալը.

Պատվիրատուի կողմից 22.06.2020թ. «Վանդաժի» ՍՊԸ-ին ուղարկվել է համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը՝ խնդրելով

ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ընկերության կողմից հաստատված գրությունը և կնքված համաձայնագիրը, ***մինչդեռ՝ թիվ «ՀՀ ԱԺ ԲՄԱՇՁԲ-20/1» պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ նախատեսվել են ՀՀ կառավարության 18.06.2020թ. N 1017-Ն Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 25.06.2020թ.:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից 22.06.2020թ. «Վանդաժի» ՍՊԸ-ին ուղարկվել է համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը՝ ՀՀ կառավարության 18.06.2020թ. N 1017-Ն որոշումը ուժի մեջ չմտած լինելու պայմաններում, մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է, որ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, ուստի գտնում եմ, որ Պատվիրատուի կողմից 22.06.2020թ. համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը ուղարկելը իրավաչափ չէ:

Միևնույն ժամանակ, հարկ եմ համարում արձանագրել, որ Կարգի 18-րդ կետը հստակ սահմանում է, որ ***համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, մինչդեռ՝ Պատվիրատուի կողմից*** կազմակերպված «***ՀՀ ԱԺ ԲՄԱՇՁԲ-20/1***» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանի փոփոխությունը տեղեկագրում հրապարակվել է ***23.07.2020թ.***, այսինքն՝ բացի այն, որ Պատվիրատուն համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծն ուղարկել է ՀՀ կառավարության 18.06.2020թ. N 1017-Ն որոշումը ուժի մեջ չմտած լինելու պայմաններում, այլ նաև այդ օրվա դրությամբ ***սահմանված կարգով փոփոխություն չի կատարել գնումների պլանում*** :

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 18-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, ուստի նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.07.2020թ. թիվ 26/26-1/11039-2020 գրությամբ «Վանդաժի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**